

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկակ 12 ֆր.	
վեցամսեայ 7 "	
Արսասահմանի համար	համար
սարեկակ 15 "	
վեցամսեայ 8 "	
Անկերիկայի համար	համար
սարեկակ 3 ֆր.	
վեցամսեայ 1.50 "	

Մանուգրան սոյր աստիճանի կրեպի համար 40 սանթիմիտի վերջին կրեպի համար 20 սանթիմիտի կրեպի անկերիկայի համար 20 Օ/Ս զիջ կրկայ:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմիտի

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔՈՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ԵՄԱԽ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРИАНЪ

Նամակ և որամ գրկեց խմբագրութան հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie);

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և յանձնարար

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՍԿՍՎՈՒՄ Է

Սուլթանի դէմ եղած անյաջող մահափորձից և Չմիւսնիոյ մէջ տեղի ունեցած ձերբակալութիւններէն յետոյ, մեծ սարսուռներով մահացուցիչ հովերը փչել սկսեցին:

Օտար թերթերը հաղորդում են որ Օրմանեան գիմել է թուրք կառավարութեան Չմիւսնիոյ հայերին պաշտպանելու միջոցներ ձեռք առնել, որովհետեւ թուրքերը սպառնում են կոտորածի սկսել. իբր թէ Օթմանիոյ նահանգում արդէն ջարդ է սկսվել. իբր թէ Տրպիզոնի շրջանում երկու մեծ մզզիթներ օգն են հանվել գինամիտով, և հարիւրի շափ թուրքեր սպանվել. էրզրումի մէջ ուսմբեր են բռնվել Պոլսոյ մէջ լուրեր են տարածվել որ հայ յեղափոխականների դաւադրութեան մի մեծ պլան է գտնվել որի համեմատ Բանք Օթմանը, Դէտ Պուպլիքը և գեսպանատները օգը պէտք է հանվէին և այդ նպատակին հասնելու համար այդ հիմնարկութիւններին մօտիկնալու համար ականներ են շինված. Իրանա գիտական շրջանակներում այս վերջին լուրին չեն հաւատում, որովհետեւ այդքան խոշոր ականներ փորելը գրեթէ անհնարին զործ է համարվում, և ընդունվում մտածածին ու նախաբան քրիստոնեաների մանաւանդ հայերի ջարդի:

Ուրեմն ընդհանուր ջարդի սարսափելի ուրականը կրկին ցցվում է սահմակամ յայ ժողովրդի աչքերի առջեւ... Եւ այս Ի՞նչի. որովհետեւ ինչ որ անձանօթ գաւաղի բեր, ինչպէս հաւատացնում են, Սուլթանը սպանելու փորձ են արել, մեքենան գրել փախել են, Սուլթանի փոխարէն ձիւր և անմեղ մարդիկ սպանելով, Չմիւսնիոյ մի հայ, իր հեանքը փրկելու համար ոչնչացնում է մի խոշոր զործ որի տեղի ունենալը թէ

ինչ հետեւանք կունենար, յայտնի չէ որոշապէս, և առիթ է տալիս թուրք կառավարութեան ամեն ինչ բարդելու հայերի վրէժխին, ու բզկի բզկի եղած ժողովրդի առջեւ սուր, դաշոյն շողացնելու շարժառիթը ստեղծում:

Վաղը թե՛ Եւս, Թիւրքիայի ամեն մի անկիւնում կրկին հայ արեան հեղեղները փոխարինեն գետերին...

Ինչ է սա... ապուշներ. խելագարներ ի վրէժի վրէժ... խելագարներ որոնք իրենց մազերն իսկ փրկելու մտահոգութիւնը և խելացիութիւնը ունեն. իսկ զըժբախտ ժողովրդին դալիք սարսափելի հարւածները նախագուշակելու խելքից և մտահոգութիւնից բոլորովին զուրկ են...

Այս նոր մեծ դժբախտութիւնների նշանները երեւում են ուշատ շարագուշակ են այդ նշանները... թուրք կառավարութիւնը անշուշտ իր պատրաստութիւնները տեսած է այս ձեռք հարւածներ տեղացնել հայ ժողովրդի վրէժին... և ով է նրա ձեռքը կասեցնողը... մեր Եւրոպացի բարեկամները արդէ՞... երանի թէ այս անգամ գոնէ նրանք կարողանային այդ հարւածների առջեւ առնել... հաւատանք որ պէտք է կարողանան... հաւատանք որ Եւրոպան պիտի հետաքրքրվի մեր վիճակով. կասկածը մեծ է. և երանի թէ մենք սխալված լինէինք:

ՎԱՐԴՕ

ԳԻՏԱԿՆՈՒԹԵԱՆ Ա Ր Զ Ա Գ Ա Ն Ք

Սիւրբի Վարդօ
Դաշնակցութեան ներքին սիստեմի մասին ձեր գրածները հոս գիտակից դասակարգին վրայ մեծ ազդեցութիւն գործեցին և ամէնքն ալ սա համոզումը ունին թէ քանի որ արտ մը գոյութիւն ունի, հետեւաբար պէտք է չի ծածկել ու նշարակը զննելով պէտք է բուժել. երանի թէ ներկայ պարագաները տարիներ առաջ ներկայացած ըլլային և

դուք այն ատեն կարողացած ըլլայիք մատնանել ներկայ խնամական ու աղայական կապերը. որք յեղափոխական բուն ու ճշմարիտ գործը ուժանելու ծառայած են և թերեւս մինչև ցարդ հրապարակը մաքրուած կըլլար. ու սեղի չէին ունենար այն սխալմունքները, որք շատ սուժել սուրն մեր ժողովրդեան:

Ձեր սկսած կռիւը սուրբ ու ներբական է, հետեւաբար շարունակեցէք զայն, առանց ընկրկելու. իպէսնի սօքթօր Շթմանի պէս թէ կարի հայածեն զձեզ ու նոյնիսկ համարձակին քարկոծել. բայց իրողութիւնը միշտ իրողութիւն է և ճշմարտութիւնը ուշ կամ կանուխ լաղթող պիտի հանդիսանայ, բաւական է ինչ որ սիրող յեղափոխականները:

Ինչ ու միւսնոյն ատեն ջանացին վտրկաբեկել այս ու այն գործիչները որոնց եղունգն անգամ չէին արժեր:

Ձեր ձեռք առած պայքարին յաջող պսակմանը անձկալիք սպասելով, որով Դաշնակցութիւնը են առեւտարակ հայ յեղափոխութիւնը պիտի դրուի անելի ամուր և հաստատ հիմքեր վրայ և հրապարակը մաքրուի կարգ մը ֆօֆօնա յեղափոխականներէ:

Ձերմազին ճակատող կը համբուրեմ:

Գոյդ ...

Պուշկարիա ... քաղաք
Այս նամակը Բուլղարիայի մէջ գտնուող ինտելիգենտ, գիտակից և այսինչի կամ այնինչի հովանաորութիւնը չը փնտոող, իր գոյութիւնը պահպանելու համար, մի դաշնակցական ընկերոջ նամակն է, որը ոչ միայն իր անձնական այլ և իր շրջապատողների կարծիքներն ու տրամադրութիւններն է յայտնում իմ սկսած պայքարի մասին:

Մեր ընկերը իմ կացութիւնը համեմատում է Իպսէնի Շթմանի կացութեան հետ և վախ ունի անգամ որ կարող են և ինձ քարկոծել: Ես իմ գրութիւնը այդքան ոչ բարձրական չեմ գրտնում. պայքարը սկսած օրից հէնց երկրից և արտասահմանից գիտակից ընկերները արձագանքեցին և շարունակում են արձագանքել: Բրքան խստացայ,

գիտակից շրջանակները այնքան աւելի սկսեցին իրենց համակրութիւնը յայտնել, և ես մեծ յոյս ունեմ որ այդ գիտակիցների շրջանակը հետզհետէ աւելի պէտք է լայնանայ, մանաւանդ որ պայքարի սկսաց օրից յետագայ դէպքերը արագաբար գալիս են հաստատելու իմ վախերի և ինձ գրգող շարժառիթների շարագուշակ իրականութիւնը:

Մենք չենք կարող բացատրել մեր ուրախութիւնը որ Դաշնակցութեան մէջ գոյութիւն ունի գիտակից ընկերների աւելի խոշոր թիւ քան մենք երեւակայում էինք և ինչպէս ասացինք յոյս ունենք որ այդ տեսակ ընկերները գեռ կը շարունակեն երեւան գալ, ոչ ինձ օգնելու համար, այլ Դաշնակցութիւնը դնելու իրական յեղափոխական հիմքերի վրա, որպէս զի նա իրականապէս օգուտ կարողանայ բերել մեր դժբախտ հայրենիքի և ժողովրդի ազատագրութեան ու վերածնութեան գործին:

Հալածանքից ես վախ չունեմ, որովհետեւ սովոր եմ դիմադրելու. քարկոծումից էլ վախ չունեմ, որովհետեւ այդ տեսակ մի երեւոյթը կապացուցէ դիմացս գտնուողների թուլութիւնը և կը շեշտէ իմ պայքարի արդարացիութիւնը, որոնք եւ կը լինեն իմ զէնք ու զրահը կուրծք տալու ամեն մի գրոհի:

ՎԱՐԴՕ

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՒՄՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Վերջին «Մշակոյն»-ը արդէն հրատարակած են Յարին հրովարտակը, որով հայոց դպրոցները, եկեղեցական կառուածները և հարստութիւնները կը վերագարձուին «Հայ ժողովրդին խաղաղ յառաջադիմութիւնը իր բնական ճամբուն մէջ դնելու համար»: Ամբողջ կովկասի մէջ ուրախութիւնը մեծ է. ժողովուրդը շատ ոգեւորուած է իր տարած յաթմանակին վրայ և ամեն կողմեր կաթողիկոսին հրամա

նով գոհարանական ժողովանքներ կը կատարուին ցարին ըրած շնորքին համար :

Կաթողիկոսը թիֆլիս գտնուելով անոր դիւանը պաշտօնական հրաւերով ժողովուրդը Մայր եկեղեցին կը հրաւիրէ ներկայ ըլլալ գոհարանական ժողովանքին :

Գարոցներէն վերջը մամուլն ալ անուգետի մէջ է. «Մշակ» կը խոստանայ իր ծաւալը ընդարձակել, բաժանորդներուն և աշխատակիցներուն պահանջումին վրայ, «Նոր-Դար» վերսկսուած է. Արշալոյս անունով մեծածաւալ նոր թերթ մը պիտի հրատարակուի բազմակողմանի ծրագրով մը :

Ինտելիգենտ երիտասարդութիւնը որդեորութեան մէջ է որովհետեւ հարեւաբար գարոցները պիտի բացուին և ան նորէն առիթը պիտի ունենայ մտնելու բուն ժողովրդի մէջ և անոր յառաջադիմութեան գործին ծառայելու. Պարտն և ուրիշ անեւտրական քաղաքները այլևս չը պիտի կրնան իրենց մէջ հաւաքել այն մաքուր ուժերը որոնք ակամայ իրենց բարոյական պահանջներուն յարմար գործեր չը գտնուով, իրենց գոյութիւնը կը պահպանէին մեծ քաղաքներու մէջ և ստիպուած կ'ըլլային իրենց գաղափարները մէկդի դնելով, օրայան հասցի համար ծառայել այս ինչ կամ այն ինչ պուրժուային :

Արեւ մըն է որ նորէն կը ծագի առասանայու համար, ու այդ արեւը համեմատաբար աւելի վառվռուն պիտի ըլլայ եթէ իրօք ուսական ուժի մը աւելի որոշ ազատական գոյն ունենայ և բոլոր հպատակները միջոցը ընենան առանց արգելքի իրենց ընդունակութիւններուն համաձայն յառաջադիմել :

Բայց մեր արեւը ե՞րբ պիտի բացուի, արդեօք որ մըն ալ պիտի գա՞յ որ մենք Տաճկաստանի մէջ կարենանք մեր ժողովրդին յառաջադիմութեան գործին նուիրուիլ :

Թեան գործին նուիրուիլ : Այս օրերը բոլորէն ինքնիշխանութեան ճիւղը աւարտող երիտասարդ մը հետեւեալ առիթը ուղղած է «Շարժում» խմբագրատեղին :

«Աւարտած ըլլալով մտադիր էի թուրքիա վերադառնալ, սակայն այժմ այդ միտքը իրագործել անկարելի է, քանի որ Պոլսոյ եւ Իզմիրի ծանօթ գէպքերէն յետոյ խստութիւնները ծայր աստիճանի հասած են և մուտքը արգելուած :

Արդ, խնդրեմ, եթէ այդպէս ուսուցիչ կարիք կայ, մասնաւորապէս բնական գիտութիւնները աւանդելու համար, զիս ի նկատի ունենա՞ք »

Ու քանի՞ այսպիսի երիտասարդներ ունինք, որոնք ուսում կ'առնեն Եւրոպայի մէջ իրենց Հայրենիքը վերադառնալու և մեր խեղճ ժողովուրդին ծառայելու համար, բայց չեն կրնար ու կ'ստիպուին կամ ներպիտոյ մէջ թափառել, կամ թէ մեր գաղութներուն մէջ իրենց գոյութիւնը կերպով մը քաշկռուել :

Աւելորդ չենք համարել այստեղ պուրջարահայ գարոցներու Հոգաբարձութեանց դիմել որ եթէ պէտք ունին «Շարժում» միջոցով, կրնան դիմել այդ երիտասարդին, մեր խեղճ ուսուցչական հասարակութիւն մէջ պատրաստուած երիտասարդ մը աւելցնելու համար :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բուսնուք 10 օգոստ. 1905

Տեղւոյս ազգային վարժարանաց եւ մանկապարտէզի ամսվերջի հանգէսներն շատոնց կատարուեցան և եթէ ժամանակին «Շարժում» չի գլորեցի պատճառը ուրիշ բան չէր, բայց եթէ ոչ մի քանի քաղաքներու

գարոցներուն հանգէսներուն մասին արդէն գրուած ըլլալը, որովհետեւ, ըստ իս հարկ չի կայ առանձին-առանձին նկարագրել : Երբ քաղաքին, վարժարանին ու հանգիսավայրին անունը փոխուի կարելի է ամեն տեղի համար յարմարել. եւ թէ նոյն յաւիտենական տափակութիւններն ու պատուելիական ճոռոմաբանութիւնները են որ ամէն տարի կրկնուած են, կը կրկնուին ու պիտի կրկնուին ցվերջ : Շատ հազուադէպ է որ ընթերցող մը այսպիսի նկարագրութեանց մէջ չի նկատէ որ օրինակելի նմանութեան մը հանդիպել : Եւ ամէն տարի ի կարգին հայ հասարակութիւնը խուռն բազմութեամբ կը խառնուի, կը ծափէ, կը ծափահարէ ու իրբեւ թէ եղած յառաջդիմութիւնը դնահասած եւ հանդէպ վարժարանին ունեցած պարտականութեանց կատարումին մէջ թերացած չըլլալուն վայելքովը տուն կը վերադառնայ եւ այնուհետեւ վայրկեան մը իսկ չի հետաքրքուիր ու գարոցին սեմէն իսկ ներս ուք չի կոխել, հոգ չէ թէ նոր տարեմուտին այդ սուրբ ու ներկական յարկը կարգ մը մակարոյններու, բարոյական սնանկներու բոյն դարձած է :

Տեղւոյս վարժարաններուն նախորդ հոգաբարձութիւնը քանի քանիս հրաժարելէ եւ ժողովրդին միահամուռ թախանձաւք իր պաշտօնը վերստանձնելէ ետք, այս տարի վերջնականապէս հրաժարած է՝ առանց սպասելու օրինական պայմանաւոր լրանալուն : Եւ այս հրաժարումի փութկոտութիւնը կարելի է վերագրել վերջացող գարոցական տարեշրջանին կիսոյն իր եւ նորին տիր թաղական խորհրդոյ միջեւ ծագած անտեղի ու շնչին խնդրոյ մը բանակոտելին, որու մէջ թաղական խորհուրդը թիւրիմացութիւններու

վրայ յենլով անպատուաբար դիրքի մը մէջ գտնուեցաւ :

Ծաւ է ըսել թէ՛ պաշտօնական մարմին մը որ այնչափ ազմուկներով ընտրուեցաւ եւ գաղթականներու դէմ տարած յաղթութեան դափնին ներսով պակուած՝ նստաւ կանանչ սեղանին շուրջը, փոխանակ ժողովրդին ամէն խաւերէն սիրուած ու յարգուած եւ իրեն պաշտօնին տէր հոգաբարձութիւն մը քաջախելու, իր մէկ անդամին ձեռքը խաղաղիկ դարացած՝ կարելին ըրաւ զայն կաշկանդելու եւ շլատելու անոր ոյժը. ու իր անյաջողութենէն դժգոհ սլաքները ուղղեց հոգաբարձութեան ատենապետին դէմ որ, 4-5 տարեան պաշտօնավարութեանը միջոցին անձնուիրաբար աշխատեցաւ և մեծապէս զարկ տուաւ վարժարանաց նիւթական եւ կրթական վիճակին :

Ճշմարտութեան հակառակ բան մը ըսած չըլլալու համար, այս առթիւ ընդարձակ չի պիտի գրեմ, այլ պիտի սպասեմ վարժարանաց տեղեկագրին հրատարակմանը : Միայն սա չափը պիտի յիշեցնեմ մեր թաղական էֆէնտիներուն թէ իրենց ներկայ քերթովական կաք ու խեղճափառի կազմով կարող չեն մազաչափ անգամ օգտակար հանդիսանալ զիրենց տարու հայ համայնքին եւ թէ աւելի օգտակար կը հանդիսանան երբ ինքնին տան իրենց հրաժարականը ու գործէ քաշուին, անգամ մըն ալ ազգային խորհրդարարէն ներս չի կոխելու երդումով, չ'ունեն քանոնէն ուղիղ գիծ չըլլար հետեւողութեամբ, գիտիին անարատն ու օղիին քրաթն հասկնալու մասնագիտութիւնն ունեցողէ ազգային—եկեղեցական գործերը ղեկավարող չըլլար :

Նորոք հոգաբարձութիւնը կազմուած է արդէն եւ գործի իսկ ձեռնարկած, իրենց ընտրած ուղղութիւնը առ

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԷՑԳ

3

Դ Է Ֆ Ի

Հայկական Ռոման մը

(Թարգմանութիւն Անդրէի Երէնի)

Գլ. Բ.

ՎԱՃԱՌՊԱՆ ԻՆՍԱՆ ՄԸ

Հայրս նստած էր հասարակ սեղանի մը մօտ, որ խառնակուած էր գրքերով հանդէսներով, լրագիրներով ու այլաբարձի բոլոր քաղաքակրթեալ անկիւններէ եկած նամակներով վանդի, հայրս. Արամբանը, տակաւին վաճառական մէր ինչպէս իրմէ առջի իշխանազուն նախահայրերը : Մեր մեծ ապարանքը, իր եօթանասուն սենեակներով, դարեր անոնց բնակատեղին եղած էր :

Ըստ անհղուցեան ասի շինուած էր Սողոմոնի ժամանակ, երբ այդ վաճառական միապետներուն ամենամեծը, ամենաբարեալն ու ամենախելացին իր թագաւորութիւնը ճոխութեամբ կողոզէր, որ և շրջակայ երկիրներն ալ յորդեցի : Այդ ապարանքը Հայաստանի յարափոփոխ ճակատագրին բաղադրիցն էր : Մէկ սերունդի մը ժամանակաշրջանին կը խորտակուէր ան կրակով, յաջորդին՝ մո-

խիւներուն մէջէն՝ փրկելի մը նման կը վերականգնէր. Պարսիկ, Յոյն, Հռովմայեցի, երբ յաջորդական հոսանքներով անցան զժքազդ Հայաստանի վրայէն, բոլորն ալ բաժին մը ունեցան քանդուած այս ընդհանուր գործունէութեան մէջ : Եւրոպայէս, Գաւիթի ցեղէն իշխանապետութիւն մը—մեր նախահայրերը—սիրացան երկրին կամ թագաւորութեան արժանացան ու աւելի քան դար մը գեղեցիկ կերպով կատարեցին զայն : Յայնժամ մեր պապերուն ապարանքը վերանորոգուեցաւ — սւանդութիւնը կըսէ՛ նախկին թաղուած աւերակներուն վրայ—արտակարգ շքեղութեամբ մը—չքեղութիւն մը, որ մօտ հազար տարուան անցքէ մը վերջ կարելի էր տեսնել տակաւին :

Հօրս օրհնութիւնը ստացած՝ սո. վորականին պէս, Միքէին օգնելու համար—պտուղները ու բլիթները պատրաստելու եւ մեր պարզուկ ճանքերուն խահուէն աղալու—հեռանալու վրայ էի, երբ հայրս ետ կանչեց զիս :

—Ինչֆիս, ըսաւ ան, առաւօտեան կանուխ արշալոյսին, ոչխարներու խոտ գտնելու համար, սա դաշտին շրջակայքը պտտեցայ : Ամեն ինչ հանդարտ է : Մեր հայկական կարճատեւ ամառը իր գեղեցկութեան մէջն է, Գնա՛, աղջիկս, Միքէն հետք ա՛ռ տեսի՛ր մեր պանծալի երկիրը ու երկար տարիներէ ի վեր սրտուժ փայլած բազմաճիւղ իրագործէ : Լեռան ստորոտէն հեռու մի՛ երթա՛ք : Գնա՛,

և թո՛ղ մեր հայրերուն Աստուածը օրհնէ Ինչֆիս :

Գնա՛ր մը ըրաւ հօրս նայեցայ : Կ'նա՞ր այդ արտօնութիւնը իրական ըլլալ : Արդեօք ականջներս խաբած էին զիս, Վեհները երթա՛ւ : Տարիներ շարունակ այս էր եղած սրտիս ինքը : Աւերախուժեմէս պայանձած էի : Նոյն միջոցին Գրօգօն վրայ եկաւ ու խոնարհութիւն ընելով՝ ըսաւ. — Ո՞՞՞՞ր իմ, պիտի թողուք որ ծառանիդ ուղեկցի ու, իհարկին, իր կեանքով պաշտպանէ ձեր գեղեցիկ իշխանութիւնը :

—Ո՛՛՛՛չ, Գրօգօն, պատասխանեց հայրս, այսօրուան համար Միքէն բաւական է : Կուգայ ժամանակ մը, աւա՛ղ, Աստուած մի՛ արասցէ, որ մեր ծաղիկը (՞) մեր բովանդակ պաշտպանութեան պիտի կարօտի : Երբ այդ ժամանակը գայ իր լաւագոյն—իր միակ պաշտպանութիւնը պիտի ըլլայ մա՛հը... Ի՞նչոյնը պատրաստ է : Հայրս երեսը դարձուց, բայց նախ քան այդ տեսայ անոր վրայ այն անոնի արտասայտութիւնը, որ այնքան ծանօթ էլ մանկութեանս :

Գրօգօն չէր սիրել իս, ու թէպէտեւ հայրս կը վստահէր ու կը վարուէր անոր հետ իրբեւ զաւակ մը, սակայն իմ անոր նկատմամբ ունեցած զղուանքս տարուէ տարի կուելնար :

Հօրս պատասխանին համար երկմտութեան մէջ էի, բայց Գրօգօնի մերժումէն զգացած բերկրանքս իր

խօսքերուն արհաւիրքին մէջ խեղդուեցաւ—ի գոթ անոր Ափսո՛ս խեղճ հայրս :

Այսուամենայնիւ, շուտով թողով հայրս, Միքէին վազեցի պատմելու : Ու մոռնալով իր զարհուրելի խօսքերը և իրեն նկատմամբ՝ անոնց հոգւոյն ներշնչած ցաւը, երգեցիկ թողնելի մը նման գուարթ էի :

Յիրաւի, ամբողջ տասնեւեց տարիներ վաճակուած թոյնու մը եղած էի. Սակայն վաճակուած համար բողբոջու պատճառ մը չունէի երբէ՛ք : Ան պէտք եղածին չափ մեծ ու հետաքրքիր էր. իր եօթանասուն աւերակ ու խարխուլ սենեակներուն մէջ զեզերելու համար, կային ընտիր մայրիկ սիւներով դաշիլներ, տեղ-տեղ կրակով ամխացած, ուրիշ մասեր, փոխորհիկ, անձրեւի և մրրիկներու ազդեցութեան տակ՝ քայքայուելու մօտ, կային մարմարեան խորտակուած կտորներ, մոզայիկի հազուագիւտ բեկորներ, նուրբ գեղեցկուած թեւեր մը քանդակուած հոյակապ սիւներ, որոնք անձեղուն գործիքները բարձր կը պահէին : Կային նաև ոսկիով գործուած վիճակներ—գլխուած գունափոխուած ու ցեցակեր : Բայց ինչո՞ւ վերակրկնել բոլորը : Երեսակայութիւնը շատ լաւ կրնայ պատկերացնել ինչ որ եղած էր ասե՛նօք — ու ինչ որ էր : Միքէն շատ իրաւացիօրէն կը բացականչէր երբեմն—«Երբեք ու պատուական վարքեր ի՛նչպէս պղծուեցան» :

այժմ անձանք ըլլալով ինձ չի պիտի կարողանամ որոշակի բան մը գրել իրենց մասին, այլ պիտի սպասեմ իրենց գործունէութեանը:

«Արաքս» նուագախումբէն ետք, Մարգրիկ (Սուքնաք) խումբ մըն ալ ունեցանք: Շարաթ երեկոյ տեղի ունեցաւ Մարգրիկին ցայգահանդէսը: Երգեցիկ խումբն ալ, որ իբր գիտաւոր տատղ ատեն-ատեն կը փայլի եւ յանկարծ անյայտ կը լլայ, իր մասնակցութիւնն եւս չէր զլացած այս անգամ: Երգերն ու խաղերը առհասարակ լաւ անցան: Ձեռ կարծեր որ հասոյթը գոհացուցիչ ըլլայ, որովհետեւ բազմութիւնը այնքան ճոխ չէր:

Արաքսի Մարգրիկի եւ երգեցիկ խումբի անդամներուն պիտի թելադրէիք որ, փոխանակ անշատ-անշատ գործելու աւելի լաւ կընեն որ միանան ու միասին խումբ մը կազմեն: Երգ, նուագ իրարու լրացուցիչներ են եւ մարզանքը միշտ անոնց ընկերակցութեանը պէտք ունի:

Սանցո

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՅՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Ա.— Բազմաթիւ մէջ կազմակերպուած Բարեգործական և Բարենպաստակ ընկերութիւններ և խումբեր Ազգիկն կողմանէ ճանչցուելու և ի հարկին պաշտպանութիւն համար, պարտին իրենց կանոնագիրներն ներկայացնել խորհրդոյս և վաւերացնել: Միևեւոյն ատեն ընդունելով հարկ դատուած բարեփոխումներն ու

Այս բոլոր հսկայ աւերակներուն մէջ պտտելու թոյլտուութիւն ունէի, բացի արեւելեան այն կողմնամասէն, որ շատ դարերու փոթորիկներուն կործանումէն ալ չէր անձեղուն, մոռցուած մնացեր էր: Խախտ գերանները իմ անփորձ ոտքերուս համար վտանգաւոր էին, ուստի, այնտեղ արգիլուած էի երթալ: Ինչպէս որ ինչ ամեն արգիլուած բաներ, այդ անձանքը Արեւելեան բաժինը երեւակայութեանս մէջ հզօր հմայք մը արթնցուց, սկզբունքով թէ որ մը պիտի տեսնեմ:— անձ՝ սրտիս անդիմադրելի տենչը, Որքան քիչ կերակուր թէ՛ այս յոյսս ինչպիսի հանգամանքներու ներքեւ պիտի իրականանար:

Մեր հնադարեան ապարանքէն զատ չընդառնելու համար կար նաև լայնատարած պայտէզներ, Ժամանակին տէրրասնեցող զարդարուած էին անոնք իսկ հիմա, ատենց մարմարէ սանդուխներն եւ հայելանման լճակները լոկ անցեալի յիշատակներ դարձած: Զարդ ու փշուր մարմարիտներ, անգործածելի աւազաններ, եզունուած արձաններ—անձ՝ թէ ի՞նչ էր ներկան: Կային նաև ծաղկի և պըտուղի հրապուրիչ պարտէզներ: Ասոնք—միակ հաճոյքը որուն հայրս անձնատուր կը լլար—իր ու Գրոգոյի օգնութեամբ կանոնաւոր վիճակի մէջ էին:

Այս, վանդակս բաւականէն աւելի զիս ու չահեկան էր, սակայն և այն

յաւելումներն, Անվաւեր ընկերութիւն, առանց բացառութեան, պաշտօնապէս չի ճանչցուիր Ազգէն, հետեւաբար յանուն այդպիսի ընկերութեան մը կողմանէ եղած ունէ խնդիր անլսելի կը մնայ:

Բ.— Խորհրդոյս աշակցութեան վտանգելով առանց օրինաւոր անցագրի քաղաքս հասնող ազգայինք ետ դարձուելու վտանգին կրնան ենթարկուիլ, քանի որ կառավարութեան բացարձակ հրամանն է ոչ ոք ընդունիլ երբ ձեռքը չունի նոր և կանոնաւոր անցագիր մը:

Գ. Այն ամէն աղբաւ ազգայինք որոնք քաղաքս հասնելով մնալ կը դիմեն նպաստ խնդրելու և կամ ճանապարհածախս արտասահման երթալու համար, պէտք է գիտնան թէ Ազգ. սնտուկը հաշիւ հազ կարող լինելով իւր ծախքերն հոգալ, բացարձակապէս անկարող կը գտնուի այդպիսեաց գոյզն օգնութիւն մը իսկ ընել:

Դ.— Զանազան հիւանդութեամբ և կամ տարափոխիկ ախտերով վարակեալ ազգայինք կարծելով որ ուրիշ քաղաք մը փոխադրուելով իրենց հիւանդութեան դարման մը կրնայ ըլլալ, քաղաքս կուգան շարունակ օգնութիւն խնդրելով: այդպիսիներուն համար հիւանդանոցներու գոնեանքը թէ միշտ փակ լինելով, կ'ստիպուին վարժարանիս խոնաւ նկուղներուն մէջ գիշերել: հետեւաբար այդպիսիներ

պէս տակաւին վաճակ մէջ, Աստուծոյ չընաղ երկրին վրայ ոտք չէի դրած երբէ՛ք: Երբէ՛ք իր բլուրներուն մօտեցած չէի: Երբէ՛ք ազատութեան հիւքը չէի շնչած: Աւ հիւստիս—հիւստիս... Երբ որ ինչի, վանդակուած թոշուները ո՛չ բազէն կը վախնան, ո՛չ դարանէն և ո՛չ ալ թակարդէն: Աւա՛ղ, անմիտ ինչիսին, Հառաչանք մը հաննցի: Արգիծք չափէն աւելի՞ էր այս երջանկութիւնը...

Պ. Գ.

ՎԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՌԸ ԲԱՅՈՒՆՅԱՒ


Տակաւին կանուխ էր, երբ Միքէն ու ես ճամբայ ելանք: Մտադիր էինք պարտէզին ծայրը գտնուող գաղտնի դռնէն դուրս ելլել, սակայն, ժանգոտ բանալին ժանգոտ կղպանքին մէջ դարձնելու շատ մը ապարդիւն փորձերէն վերջ, յուսահատ թողուցինք զայն և ուղղուեցանք—ինչ որ մինչեւ հիմա ճանչցուած էր—գլխաւոր դուռը:

Անօգուտ է ըսել որ այլ եւս զըլխաւոր չէր ան: Մեծ կամարածեւ մուտքին երեք քառորդ մասը գոցուած էր կոշտ ու կոպիտ մէկը միւսին վրայ գաժուած լատերով: Մնացած նեղ անցքէն հազիւ մէկ հոգի մը կարող էր անցնիլ ու ատոր ալ յարմարութեամբ էր կաղնիէ հաստ, զիմաց կուն զուռ մը, ներսէն գուրս ցցուած

լաւ կընեն որ իրենց գտնուած քաղաքին մէջ մնան և ջանան հոն դարմանուիլ, որով խնայած կըլլան թէ՛ իրենց և թէ՛ սիրտ խշխշացնող տեսարաններ պարզելէ հանրութեան աչքին:

Ի գիմաց Թաղակաւ խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Ն. Գ. Բէստանեան Ա. Ազնաորեան 10 Օգոստ. 1905 (Կնիք) Վ. առնա

Պ. ՎԱՐԴ ՊԱՏՐԻԿՈՅԻՆ



Մեր ընկեր Պ. Ժաք—Լէօնի Ձեզ տուած հերքումը, որուն կը յուսամ թէ հետեւին Վահանեանի և Պապա Գասպարի հերքումներն ալ, եթէ միջոց և դիւրութիւն ունին անոնք Ձեզի պատասխանելու, այսօր առիթ կուտայ ինձի երկու խօսք ընելու Ձեր բըւնած թունաւոր ու մաղձոտ ընթացքին համար՝ հանդէպ Գաշնակցութեան:

Աւելի յարմար պարագաներու տակ և աւելի հանգարտ շրջանի մը մէջ անշուշտ առիթ կուենանք մանրամասնօրէն քննելու այն ամբողջ անհիմն, շինծու կամ չափազանցուած ամբաստանութիւնները, զոր դուք կը բնօրէնէք Գաշնակցութեան վարիչ մարմիններուն վրայ, հոգիի այնքան թիթեւութիւնով:

Աւելի յարմար առիթով մը կը վերադառնանք անշուշտ այն պարագաներուն վրայ որոնք այսօր

խոշոր գտնուող, որուն ոգնի մը կունակին նմանութիւնը տուած էին: Այս դուռը հօրս և իր այցելուներուն նստած սրահէն կը բացուէր:

Տեսնելով մեզ՝ Գրոգոս տեղէն վերցատկեց ու ամենայն դիւրութեամբ բացաւ դուռը. որպէս թէ անիւներու վրայ զետեղուած ըլլար այդ Ապա, մինչեւ մեր անցնիլը՝ յարգանքով մէկ կողմ կեցաւ: Այսուհանդերձ, մինչեւ իմ աներեւոյթանալս՝ ասելի աչքերը ինձ յառած էր: Անզուսպ գօրութեանէ մը մղեալ վայրկեան մը վեր նայեցայ ու այդ աչքերուն հանդիպեցայ: Գաղտնային դիրքաբոլորէ հոգով մը լեցուած էին անոնք. որոնք հոգիս սոչորեցին:

Սարսուռ մը անցաւ վրայս: Այդ վայրագ կրքոտ նայուածքը երբէ՛ք չը պիտի մոռնամ: Զարիքին նախագուշակումը թողուց այդ հոգեւոյն մէջ, որ մնայուն յիշատակ մը ըլլալու սահմանուած էր: Այդ բոպէէն սկսեալ իմ Գրոգոյին հանդէպ ունեցած խորշանքս ատելութեան փոխուեցաւ:

Անիւրի երջանկութիւն գոյութիւն ունի՞ արդեօք—կամ կրնայ ունենալ Այսպիսի երկար ակնկալուած օրուան մը մէջ իսկ, դժբաղդութեամբ ու տառապանքով ծանրաբեռնուած ամպեր, արդէն բարձրացած՝ անոր կապոյտը նսեմացնել կը ջանային: Վանդակուած թոշուներն թեւեւր ծանրօրէն կը քաշկոտուէին Բայց և այնպէս, իջանք մարմարի և աւերակներու բեկորներուն վրայէն, որոնք այժմ պա-

Ձեզ ստիպեցին խօսելու՝ իսկապէս աւելի արդարացնելու համար ինքզինքնիդ և վրէժ լուծելու համար Ձեր անդուք գատաւորներէն, քան թէ վարուած ազգին շահերը լաւագոյն ձեռքբերու մէջ տեսնելու արդար մտահոգութեանէն: Աւրիշ առիթով մը կը խօսինք նոյնպէս թէ որ աստիճան ասպետական վեհանձնութիւն կայ մեռած մը քննադատելու և դատապարտելու ձեր փութկոտութեան մեջ՝ երբ ամէն դիւրութիւն ունէիք այդ բանը ընելու անոր կենդանութեան միջոցին:

Ասոնց ամէնքը թող մնան հիմակուհի մայր, և նկատի ունեցէք որ խօսքը մինչեւ անգամ չեմ ընենք թէ ձեր յօգուածները ինչ անսպասելի և անսպառ նիւթ կը մատակարարեն Գաշնակցութեան խիչ թշնամիներուն:

Բայց դուք Պ. Վարդ Պատրիքօն, դուք թէ իբր թերթի խմբագիր և թէ ձեր անձնական յարաբերութիւններով, շատ լաւ գիտէք թէ ինչ վիճակի մէջ է այս պահուս կովկասը: Հայու թիւեր այսօր իր գոյութեան կըռուի ամենէն տազնապալից վայր կեանքներուն մէջ կը գտնուի, պահիկ մը ընդմիջուած խողովութիւնները ալ աւելի կատաղօրէն սկսած են, ամբողջ կովկասը արիւնի ու կրակի մէջ է և բացարձակ պատերազմ յայտարարուած է մէկ կողմէն հայերու ու միւս կողմէն թրքական, մօնղոս-

լատին վաղեմի լայն աստիճաններուն դերը կը կատարէին: Այս պէտք էր զգուշութեամբ ընել, քանի որ շատ մը ծուղակներ կային անխօսեմ ոտքերուն համար: Այս գործը ապահով կատարելի վերջ, այլ ես պարիպին գործի կողմն չի, որ այնքան երկար—յիւրա: ի մանկութեան սկսեալ—բանաս եղած էր: Աւրախութիւնս վերստացայ՝ Առաւօտեան ամպերը կարծես մոգական զօրութեամբ մը՝ անհետացան: Առջեւ տարածուած էր ընդարձակ հարթավայր մը—զըմարուխտի նման կանանչ ու լայնատարած ամփեթատորնի մը ձեւով, կանաչութիւնը, հեռուէն, զողողուն կապոյտին մէջ կաղտանար, որ, փոխադարձաբար, ինք ալ լեռնային սահմաններուն մէջ կորսուելով՝ աղաւանման թուխ գոյնով մը կը փալփէր: Գաղտնաւայրը տեղ-տեղ կէտադրուած էր ծառերու շնչելով, իսկ մնացած մասերը գեղազարդուած էին շքեղ մրտավարդերու արձակներով, որոնցմով համբաւուր է մեր Հայաստանը:

(Շարունակելի)

յական և ուսական դաշնակից բարբարոսութիւններուն միջեւ:

Կը հաւատամ որ դուք ալ, ամբողջ հայութեան պէս, կը սպասէք որ Դաշնակցութիւնը հրաշք մը գործէ, փրկելու համար կողմասը բնաշնջումի սպառնալիքէն, կը հաւատամ որ դուք ալ համոզուած էք մեզի պէս թէ կողմասը վերահաս վտանգէն եթէ երբէք կարելի է ազատել այն ալ Դաշնակցութեան միջոցով կարելի է:

Իայց դուք կը մոռնաք, Պ. Վարդո թէ պատերազմի ժամանակ զինուորը պէտք է որ ամէն ժամանակէ աւելի վստահութիւն ունենայ զինքը վարողներուն վրայ, դուք կը մոռնաք Պ. Վարդո թէ յաղթութեան մը առաջին պայմանն է ներքին սերտ համաձայնութիւնն ու համերաշխութիւնը, դուք կը մոռնաք ատոնք և ճիշդ կուրի պահուն կաշխատիք երկպառակութիւն սերմանել կունող շարքերուն մէջ, ճիշդ վտանգի պահուն կաշխատիք քանդել այն շէնքը որ մեզի պիտի ծառայէ իբր հուսկ ապաստան:

Անշուշտ ես չեմ հաւատար թէ ձեր դրութիւնները ունէ ազդեցութիւն ունենան կողմասի մէջ, բայց կը բաւէ որ դուք այդ նըպատակը ունեցած էք:

Տարբեր ժամանակի մը մէջ ձեր դրութիւնները Դաշնակցութեան շարքերը մաքրելու մասհոգութեան կարող էինք վերագրել, եթէ չգիտնայինք անոնց թաքուն շարժառիթները: Բայց հիմա ազգին անցուցած այս անվտանգ ճիւղումին մէջ, ձեր ըրածը բացարձակ և աններելի Ոճի մըն է Պ. Վարդ Պատրիքօֆի, այդ բանը լաւ գիտցած եղէք: (*)

«Հորիզոն»
Ա. ՏԵՐ ԴԱԼՍՏԵԱՆ

(*)Մ. Խ.— Ա. ՏԵՐ Գալստեան

Ինչպէս տեսնում էք Դաշնակցութեան վարչիչներին հաւատարիմ զինուորի թէ Վարդօին յուզելու եւ թէ Դաշնակցական ընկերներին վրա ազդելու դիտումով գործած ձեր ազդեցութեան յորատը արտատպում ենք ամբողջովին:

Նախ Վարդօն Արվախի Իսակ է և եթէ դուք նրան Վարդ Պատրիկովի տեղ էք ընդունում եւ այդպէս հոչակում ի լուր աշխարհի, ուրեմն դուք վերածվում էք բացարձակ ՄԱՏԻՉԻ, ինչ նպատակով պարզ է որ այդ ընդունակութիւնը օժտված մարդու հետ վիճաբանելը թէ Վարդօի՞ եւ թէ «Շարժում»ի համար անպատուութիւն է, բայց գոնէ ի պատիւ Դաշնակցութեան, որի մէջ, ինչպէս երեւում է գտնվում էք եւ դուք, պարտաւորվում ենք ի բանի խօսք ուղղել ձեզ:

Վարդօն ձեր տէրերին մեղադրում է բացարձակօրէն եւ զօկիւմաններով թող նրանք Դաշնակցութեան ընդհանուր ժողովում արգարանան եւ Վարդօին իբրև զրպարտիչ հոչակեն:

Ձեր եւ ձեր նմանների ճշգրտորէք չեն կարող իրականութիւնը փոխել եւ Վարդօն ի լուր աշխարհի յայտարարում է որ Դաշնակցութիւնը իւր սխառտը եթէ չը փոխէ հայ ազգը միայն վնաս եւ վնաս կունենայ:

Ձեր նման, ձեր որակած ընդունակութիւններով օժտված մարդկանց յուզումները եւ սպառնալիքները Վարդօի վրա ոչ մի ազդեցութիւն չեն կարող ունենայ, ինչպէս եւ ձեր վարչիչներին եւ նրանց ըլոր մանկաւրիչներին սպառնալիքները:

Մի քիչ վար իջէք ձեր վարչիչների մասին. Վարդօն նրանց զինուորը չէ եղել այլ միշտ անկախ ընդգրկողի ուժ եւ ինք իրան վարող Լուսինի խիստ մեծածնների կենդանի ժամանակը:

Ա Ձ Դ

Ողջկանց կրթարանն իր տասներորդ տարեշրջանը կսկսի օգոստոս 29 երկուշաբթի օրն:

Կրթարանն իր ծանօթ հոգածութեանն և տոհմային դաստիարակութեանն զատ այս տարի ուսումնական աւելի լուրջ և աւելի որոշ ծրագիր մը պատրաստ ունի իրեն համար:

Ընդունելութեան պայմաններուն վրայ պէտք եղած բանակցութիւնք կը կատարուին ամէն օր ժամը 9—12:

Տնօրէնութիւն
Աղջկան կրթարանի
Պ. Ժիլիերան
Վառնա

ՍԻԼԻՍԻՒԷ, 14 օգոստ. 1905

Եւրոպական և պոլսական թերթերը արգէն հաղորդեցին հայպատկան կալուածներու և վարժարաններու մասին եղած կայսերական հրովարտակի հրատարակումը: Հայերուս համար այս ուրախառիթ լուրին առթիւ կատարուեցաւ այստեղ, այսօր, մի գոհարանական աղօթք և, ի լրումն ժողովրդային զգացումներու արտայայտութեանը, շրկուեցաւ մանաւանդ Հայութեան սիրելի Հայրիկին յետագայ հեռագիրը.— նորին Սուրբ Օծութիւն Մկրտիչ, կաթողիկոս Ամենայն Հայոց, Ե Ղ Մ Ի Ժ Ի Ե:

Սիլիսիւրէի հայերս անհունապէս ուրախացանք իմանալով Ռուսիոյ Վեհափառ Սարին կայսերական ուքալի հրատարակման լուրը, հայպատկան կալուածներու և վարժարաններու մասին, որուն համար այսօր կատարուեցաւ գոհարանական աղօթք միաբերան մաղթելով, որ Մեծագոր Աստուած պարպեւէ Ձեր Սուրբ Օծութեան օրկար և ուրախ կեանք ի փառս Հայաստան եայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ: Հայցելով Հայրապետական Օրհնութիւն, մնանք Ձեր

Սուրբ Օծութեան հարգատ զաւակները:

Ի դիմաց Թաղական խորհրդի Նախագահ Ղարիպեան Քհնյ. Ատենապետ Ատենադպիր Հաճի Թարութիւնեան Թօքաքալեան Յուսալի է թէ ուրիշ տեղերու հայութիւնը սիրով պիտի փութայ կատարել իւր պարտականութիւնը: ԱԿԱԻԻ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փէրտինանտ Իշխանը յանկարծակի վերագործաւ արտասահ մանէն:

—Արտաքին գործոց նախարարը որ եւրպա կը գտնուէր յանկարծակի կանչուեցաւ: Պուկար թերթերէն ոմանք կը պնդեն թէ դահլիճին կացութիւնը խախտու է, ոմանք ալ հակառակ կը պնդեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Գ Ի Ա

Պուկար. հեռ. գործակալութիւնը կը հաղորդէ որ Պուլսոյ մէջ սպաննուած է Արիկ Ունճեան, յեղափոխականներու կարգաբարձութեամբ, զրամ չը տալու պատճառով:

—Պուլէն կը հեռագրեն որ պալատին մէջ տեղեկութիւն ստացուած է որ ծրագրուած նահանգին մէջ հայերու ձեռքով երկու բաւական մեծ մզգրթներ օգը հանուած են:

—Օգոստոս 12ին Պուլէն կը հեռագրեն թէ տեղեկութիւն ստացուած է որ թուրք զօրքերը Արաբիոյ մէջ ապստամբները ճնշելու յաջողութեան մէջ են: Թուրք զօրքերը գրաւած են Սանաա տանող բոլոր ճամբաները և ապստամբները կը փախին ամէն ուղղութեամբ:

—Վառնայի մէջ լուր տարածուեցաւ որ Պուլսոյ մէջ կոտորած տեղի ունեցեր է:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Կերմանական թերթի մը Իսթեթիկական կը գրեն թէ ընդհանուր ներման լուրը կը շարունակուի. ներումը իբր թէ սեպտեմբեր 12ին տեղի պիտի ունենայ:

—Իսթեթիկական օգոստ. 13ին կը հեռագրեն թէ ծարր յայտարարած է որ քօքէք մը պատերազմական տուգանք չը պիտի վճարէ:

—Ինու լիազօր Ռիթէ հրապարակագրի մը յայտարարած է օկոսօրուան վիճակը ինձի շատ լարուած կերելի. ճարտական պայմանները շատ ստորնացուցիչ են Ռուսիոյ համար. կերելի

որ ձաբունը կուզէ խնդիրը ձգձըգել. դեռ չեմ կրնար ըսել թէ ամէն յոյս կորած է, բայց հայտնութիւնը յաջողելու նշանները զերօյի հասած են:

—Օգոստ. 9ին Իսթեթիկական կէն Լը Գուրիէ էօրօրէէնի կը հաղորդեն հետեւեալը:

Մոսկուայի մէջ ձերբակալուած 22 սպանները, քաղաքական գաղտնի ժողով ըրած ըլլալուն համար, կը պատկանին վեց տարբեր գնդերու որոնցմէ մին թնդանօթաձրգ է: Ատոնք ժողով ըրած են վիճաբանելու համար թէ ի՞նչ գիրք պիտի բռնեն եթէ անոնց հրամայուի միջամտելու: Ձեմտվոյին նոր համաժողովը արգիւտու համար, կը հաւատարացնեն թէ այդ սպանները իրենց ընկերներուն պատգամաւորները են որոնք ամենքն ալ որոշած են զօրքերը չը տանել համաժողովին դէմ, խնդիրը միայն կը կայանայ անոր մէջ թէ այդ մերժումը ինչ ձեւով յայտնելու աւելի կը յենու էին արմատական միջոցին կողմը: Այսինքն ինքզինքնին դնել համաժողովին տրամադրութեան տակ, կարգը վերահաստատելու համար:

Ասանկ պայմաններուն մէջ Համաժողովին համար ամենէն գիւրդը կը ըլլայ ինքզինք կազմակերպուած ազգային ժողով հաշակել:

—Տէրօրիստներու շրջանակին մէջ լուր կը պտտի որ Նիքօլա Սարին կեանքին դէմ մահափորձ մը մօտիկ է:

—ՕՄսկուա խուժած են 10000 անօթի խռովայոյզ զիւղացիներ. կըսեն թէ այդ խուժումը դեռ պիտի շարունակուի մեծ չափերով. նոյնանման բան մը կը պատրաստուի նաև Օտեսա: Այս խուժումները նպաստաւոր պիտի ըլլան թէ Մոսկուայի և թէ Օտեսայի մէջ յեղափոխութիւն բարձրացնելու:

ԿՐԷՏԷԻ ԽՆԻՐԸ

Հոռմէն Օգոստոս 14ին կը հեռագրեն թէ կը հաւատարացնեն որ կառավարութիւնը հասած է այն համոզման որ առանց արիւնհեղուցութեան անկարելի է կղզին խաղաղեցնել, ատոր համար ալ որոշած է իր պատերազմական նաւերը ետ կանչել կրէտէի վտերէն:

Կառավարութիւնը կը մտածէ եղբի առաջարկել պետութեանց որ համաձայնին կրէտէն Յու. նաստանին միացնելու: Արտաքին գործոց նախարարը այդ մտադրութեամբ խորհրդակցած է Ֆերանսական կառավարութեան հետ:

